

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Դասվար (0,5), Հայոց լեզու և գրականություն (16,5 ժամ), Մաթեմատիկա (12, 25 ժամ), Պատմություն (7,875 ժամ), Աշխարհագրություն (3,75 ժամ), Ֆիզիկա (3 ժամ), Բիմիա (2,5 ժամ) Կենսաբանություն (3,5 ժամ) Ինֆորմատիկա (1,75 ժամ), Երաժշտություն (1,375 ժամ) Կերպարվեստ (1,375 ժամ), Տեխնոլոգիա (2 ժամ), ՆՁՊ (0, 5 դրույք), Ֆիզկուլտուրա (7,25 ժամ), ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(Ձև 1),
- մեկ լուսանկար 3X4 չափի:
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին** ՀՀ Սյունիքի մարզի Տավրուսի միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Տավրուս, փողոց 2 տուն 22

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)95-96-26 , (098)18-61-00, (094)76-16-99
հեռախոսահամարներով:

«Կրթություն» շաբաթաթերթ՝ 10.08.2022թ.: